

## ՅԻՄՈՒԽՆ ՃԱՐԻ ԱՌԱՋԱՁ

### ԴՐԻՔԵԱՆ ՑՈՐԵԼԵԱՆ ՅՈՒՆԻՆԱՎԱՆ ՀԱՆԴԻԾԱՆԵՐ

Յոբելինական կեդր. Յանձնաժողովը կարգադրեց որ Յոբելինական հանդէսները երկարին Հոկտ. 25, Աւրբաթ երեկոյէն մինչև Հոկտ. 28, թշ. կէսօրէն եաքը, դրեթէ երեք օր, Այս կարգադրութիւնը հղաւ որպէսզի թէ՛ Սրբազն Յոբելեարը շողնի և թէ՛ պէտք եղածին չափ ժամանակ տրուի հանդէսները վայելէօրէն կատարելու համար:

Աւրբաթ օր դադրեցան դասերը Ժառանգաւորաց Վարժարանի և Հնծայարանի մէջ, և տղաք զբաղեցան իրենց երգերուն փորձերով: Ամէն կողմ՝ հանդէսին պայծառութեան համար եղած պատրաստութիւններ գլուխ ելած են: Պատրիարքարանը պատրաստուած է վայելէօրէն հանդիսական ընդունելութեանց համար՝ Պատրիարքարանի պաշտոնեայ Հայր Սահակի խնամքով և հոկողութեամբ: Մեծ գանձին ճակատը կը բարձրանայ պատրանդան մը երկու աստիճաններով, ծածկուած գեղեցիկ օթոցով մը, որոն վրայ պատրիարքական աթոռը, սոկնզօծ և ծիրանի պատառուով: Աթոռին ետև խորքը, ոսկեթել, մետաքսահիւս, մութ կարմիր սրահակ մը ձգուած, որուն վերև եպիսկոպոսական խոյրը՝ հովուական և վարդապետական գտապաններով խաչաձեռնաւած: Որմերը դաշիճին զարդարուած են վեհապետաներու, հին և նոր պետական անձնաւորութեանց, կտթողիկոսներու և պատրիարքներու պատկերներով, որոնց շարքին Յոբելինը Սրբազնի պատկերը, շըրջանակուած մշտագլաւը սաղարթներով: Պատրիարքարանի ճեմելիքի գուռն ու մուտքը կանաչ և ծաղկաւէտ թաղարներով և գորունի փոխակերպած են աշունը Նոր հաստատաւած ելեկտրական լուսերու սարուածքը անոյշ լոյսով մը կ'ողոնէ քառուկիր, գեղակեր կամարները գանձիճին: Ս. Յակովը շրջանակին մէջ կը տիրէ ու գերութիւն մը:

Աւրբաթ երեկոյ, ժամը 3ին, աւագ

դանգակին զօղանջը հոչակած է արդէն Յոբելինական հանդէսներուն բացուածը: Հետաքրքրութեամբ լարուած ժողովուրդը փութացած է խմբուիլ Ցամարի նախադրունքին և բակին մէջ, երկիրակած ու պշնած:

Իսկ Մ. Յակոբեանց Ցամարը, ողջուն նելու համար Դուռիեան Յոբելեանը, հագած է ճոխարսոր իր առնական օրերու յատուկ պերճանքին որպավայրին: Կը կարծին ժարդարմական պատճառը լսել հոն. — Ալառ Թիւն, Տէրը իր սուրբ տաճարին մէջն է» (Ամբրակում, թ. 20):

\* \* \*

Հրաւափառի թափօրը, ի պատիւ Յոբելեար Սրբազնին, կազմուեցաւ ուղղակի Պատրիարքարանի ճեմելիքին մէջ, փոխանակ վարը՝ տառիճաններու դրան առջև կազմուեցաւ: Միարան և հիւր եպիփառուուններ, վարդապետներ, քահանաններ, ամէնքն ալ իրենց պանոկներն ու խաչերը լանջիքին ու ծաղկեայ փիլռնները հագին, սարկաւագոււնք և ժամանակաւորք սքեմասը, կուրծքներնին Սրբազն Յոբելեարի դիմանկար-կոճակներով զարդարուն, մաժակալ մանկունք, բուրգվառուկիր սորկաւագոււնք, աւետարանակիր վարդապետք և քահանայթ, խոչով և խաչվառներով կազմ ու պատրաստ են Սրբազն Յոբելեարը առաջնորդելու եկեղեցի: Եւ ահա՞ն. Ամեն: Սրբազնութիւնը կը կանգնի Պատրիարքարանի ճեմելիքին սաղարթազրդ գրան առջուածքով, կուսարարապետ Սրբազնը կը ծանրաբռնէ դրեթէ եօթանսուն տառիներով արդէն կը ուն կանակը Յոբելեարին: Պարուսէրի ծանր շուրջառով, կու տայ ձեռքը պատճական արծաթ սոկնզօծ գաւագան մը Արքակերտ, և մին խաչ մը սոկնզօշ և ականակուու: Թափօրը երգելով կը շարժի վար, դէպի Կոտուծոյ Տունը:

(«Արև», 1979, թ. Յար, Հոկտ.-Նոյեմբեր, թիւ 10-12, էջ 295 և 296:)